ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
**ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Ք. Սիսիան, Սիսական 31
Հեռախոս (2830) 33-30 Ֆաքս (02830) 33-30
էլ. փոստ sisian@mail.am

Թիվ 10/762
03 օգոստոսի 2011թ.

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
Ռ. ՂԱԶԱՐՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Ղազարյան

Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի ղեկավարի 2011թ. 281(Ա), 285(Ա) որոշումների կրկնօրինակները:

Ա. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

Կատ.՝ Վ. Պողոսյան

ՍՅՈՒՆԻՔԻ ... ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄՈՒՏՔԱՅԻՆ ... ՄԱՐՄԻՆ
ՍՅՈՒՆ No 5411
«08» 08 2011 թ.

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

21 հուլիսի 2011թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 281(Ա)

ՍԻՍԻԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՄԱՐԱՏ ԵՆՈՔՅԱՆԻՆ ԱՎՏՈՏՆԱԿ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 16) և 17 կետերով), 38-րդ հոդվածի 1-ին մասի 2) կետով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12 ապրիլի 2001թ. թիվ 286-Ն որոշման 46.2 կետի ա) ենթակետը, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ գլխի 51-րդ կետը, Սիսիանի քաղաքային համայնքի ավագանու 2011թ. դեկտեմբերի 17-ի թիվ 91 (Ն) որոշումը և նկատի ունենալով Մարատ Ենոքյանի դիմումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի Հովիկ Ազոյան 8 շենքի բակային մասից (ըստ կցված սխեմայի) 20քմ հողամաս կառուցապատման իրավունքով հատկացնել Սիսիան քաղաքի Իսրայել-Հովիկ Ազոյան 8/26 տան բնակիչ Մարատ Ենոքյանին ավտոտնակ կառուցելու համար և տրամադրել Հովիկ Ազոյան 8 շենքի բակային մասի ավտոտնակների շարքի թիվ 13 հասցեն:
2.Սահմանել, որ կառուցապատողը պարտավոր է սեփական միջոցների հաշվին կատարել կառուցապատման պայմանագրի նոտարական վավերացման և պետական գրանցման հետ կապված ծախսերը, ինչպես նաև ապահովել տարածքի բարեկարգումը և սանիտարական վիճակը:
3.Հանձնարարել համայնքի ղեկավարի աշխատակազմի քաղաքաշինության, կոմունալ-կառավարման, գյուղատնտեսության, հողօգտագործման, բնապահպանության և տրանսպորտի, առևտրի և սպասարկման համակարգող բաժնին՝ ապահովել սույն որոշումից բխող օրենքով սահմանված գործառույթները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

2011թ. հուլիսի 21
ք.Սիսիան

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԻՍԻԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

26 հուլիսի 2011թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 285(Ա)

ՍԻՍԻԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՇՈՏ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 16) և 17 կետերով), 38-րդ հոդվածի 1-ին մասի 2) կետով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12 ապրիլի 2001թ. թիվ 286-Ն որոշման 46.2 կետի ա) ենթակետը, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ գլխի 51-րդ կետը, Սիսիանի քաղաքային համայնքի ավագանու 2011թ. ապրիլի 14-ի թիվ 20 (Ա) որոշումը և նկատի ունենալով Ա. Ստեփանյանի դիմումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1.ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի Իսրայելյան փողոցի վրա գտնվող (ըստ կցված սխեմայի) 20քմ հողամաս կառուցապատման իրավունքով հատկացնել Սիսիան քաղաքի Սպանդարյան 10 տան բնակիչ Աշոտ Ստեփանյանին առևտրի սրահ կառուցելու համար և տրամադրել Իսրայելյան թիվ 61/2 հասցեն:

2.Սահմանել, որ կառուցապատողը պարտավոր է սեփական միջոցների հաշվին կատարել կառուցապատման պայմանագրի նոտարական վավերացման և պետական գրանցման հետ կապված ծախսերը, ինչպես նաև ապահովել տարածքի բարեկարգումը և սանիտարական վիճակը:

3.Հանձնարարել համայնքի ղեկավարի աշխատակազմի քաղաքաշինության, կոմունալ-կառավարման, գյուղատնտեսության, հողօգտագործման, բնապահպանության և տրանսպորտի, առևտրի և սպասարկման համակարգող բաժնին՝ ապահովել սույն որոշումից բխող օրենքով սահմանված գործողությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

2011թ. հուլիսի 26
ք.Սիսիան